

ԿԱԼԻՓՈՐՆԻԱՅԻ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԱՊՐՈՒՍՏԱԴՐԱՄԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ՝ (CALIFORNIA CHILD SUPPORT PROGRAM)

ՄԵԿ ՄԻՋՈՑ ԾՆՈՂՆԵՐԻ ԽԱՄԱՐ ...



Օգնություն պաշտօնից ազատված աշխատողների համար



Ա՞րդեք Ձեր գործը ձեռքից տվել էք, կամ ձեր աշխատաժամերը պակսեցրել են. Եթե այդպես է, երեխաների օգնութեան տեղական գործակալությունները պատրաստ են ձեզ օգնելու:

Ի՞նչպես փոխել Ձեր երեխայի ապրուստավճարի գումարը

Դատարանի մի կողմից որոշում պիտի ստորագրվի եւ ներկայացվի դատարանին՝ փոխելու երեխայի ապրուստադրամի գումարը, որ պիտի վճարեք ձեր պարագայում: Այս գործը ինքնաբերաբար չի կատարվում, երբ գործազրկվում եք կամ ձեր աշխատավարձը պակսեցվում է:

Կալիֆորնիայի օրենքը արտոնում է երեխայի ապրուստավճարի փոփոխություն (կարգավորում) երբ ձեր կեանքի պայմանների մեջ փոփոխություն է տեղի ունենում: Եթե փոփոխություն պահանջվի, երեխայի ապրուստադրամը որ որոշված էր դատարանի կողմից, կարող է բարձրանալ կամ ցած իջնել: Ձեր երեխայի ապրուստավճարի փոփոխութեան որոշումը ի զօրու է մտնում դատարանի որոշման օրը: Երեխայի ապրուստավճարի հաշվարկման մասին յաւելեալ տեղեկություն ստանալու համար, տեսե՛ք “Ինչպես է որոշվում իմ երեխայի ապրուստադրամի գումարը” վերնագրով մեր կատալոգը:

■ Ե՞րբ եմ կարող ապրուստադրամի փոփոխություն պահանջել

Դուք կարող եք փոփոխություն խնդրել երբ հետեւյալ պայմաններից որեւէ մէկը փոխվի՝

- Դուք աշխատանքից ազատվել կամ վնասվել եք.
- Դուք մի յավելյալ աշխատանք եք գտել, որը փոփոխության է ենթարկել ձեր եկամուտը.
- Ձեր կամ միւս ծնողի եկամուտը բարձրացել կամ ցածրացել է.
- Խնամակալության կամ երեխային այցելելու համաձայնագրի մեջ փոփոխություն է տեղի ունեցել.
- Դուք անաշխատունակ (disabled) եք դարձել.
- Դուք կանչվել եք ակտիվ զինվորական ծառայության.

■ Ի՞նչպես կարող եմ փոփոխություն խնդրել.

Կապվեք երեխաների օգնության ձեր տեղական գործակալության հետ՝ 1(866) 901-3212, հեռախօսահամարով կամ հետեւեալ կայքէջով՝ <http://www.childsup.ca.gov/Home/LCSAOffices/tabid/301/Default.aspx>.

■ Ի՞նչ տեղեկություն պիտի տրամադրեմ.

Փոփոխության խնդրով Ձեր հայցը վերաքննելու համար, երեխաների օգնութեան տեղական գործակալության (DCSS) պիտի տրամադրեք որոշ տեղեկություններ, օրինակ՝

- Եկամուտ եւ ծախսեր
- Երեխայի հոգատարության ծախսեր
- Բժշկական ապահովագրություն
- Անաշխատունակություն (SSI, SDI, SSA, եւ այլն)
- Գործազրկության եկամուտ/գործից արձակման նպաստ
- Կենսաթոշակ
- Խնամակալության եւ այցելության համաձայնություններ



Child Support Directors Association
A Coalition of Experts Collecting Billions for California's Children



*“Ապրուստավճար...
Մի Ներդրում Մեր Երեխաների Ապագայի համար”*

**ԵՐԵՒԱՅԻ ԱՊՐՈՒՍՏԱԴՐԱՄԻ
ԴԻՐԵԿՏՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆ**

www.csdaca.org